



**ՔԱՂՎԱԾՔ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 97-Ն**

Արթիկ համայնք

07 հունիսի 2022թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐԱՀՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՇՈՒՄ ԹԻՎ 97-Ն**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ և 42-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի առաջարկը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի բնակավայրերում գտնվող հանդիսությունների սրահների միջոցով իրականացնել Հայաստանի Հանրապետության տոների ու հիշատակի օրերին, հարսանյաց հանդիսություններին, քաղաքացիների ծննդյան օրերին, ազգային ծեսերին, սգո արարողություններին և այլ միջոցառումներին նվիրված ծառայությունների մատուցում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց:

2. Մատուցված ծառայությունների դիմաց սահմանել վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարին. սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերում գտնվող հանդիսությունների սրահների միջոցով ֆիզիկական և իրավաբանական անձանց ծառայությունների մատուցման կարգն ու ժամկետներն այն հաշվով, որպեսզի ծառայությունների մատուցման գործընթացը բացասաբար չանդրադառնա շենքի ու դրա տարածքի պահպանության նկատմամբ:

4. Հանդիսությունների սրահում՝ սպառողներին տեսանելի տեղում, փակցնել մատուցվող ծառայությունների դրույքաչափերը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով հրապարկման հաջորդող օրվանից:

Իսկականի հետ

ճիշտ է

ՔԱՐՏՈՒԴԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԻ ՊԵՏ՝



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՈՍԿԱՆՅԱՆ

Ա. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի

հունիսի 07-ի N 97- Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՔՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ , ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐԱՀՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ ՈՒ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻՆ, ՀԱՐՍԱՆՅԱՅ  
ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՔԱՂԱՔԱՅԻՆՆԵՐԻ ԾՆՆԴՅԱՆ ՕՐԵՐԻՆ, ԱԶԳԱՅԻՆ ԾԵՍԵՐԻՆ, ՍԳՈ  
ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ՆԿԻՐՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՄԱՏՈՒՑՄԱՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հանդիսությունների և այլ արարողությունների սրահներում մինչև 100քմ մակերես ունեցող տարածքը սահմանել 10000 (տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ առանց կոմունալ վճարների:
2. Հանդիսությունների և այլ արարողությունների սրահներում 100-150 քմ մակերես ունեցող տարածքը սահմանել 15 000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ առանց կոմունալ վճարների: Մինչև ժամը՝ 24<sup>00</sup> :
3. Այլ արարողությունների համար 150 քմ և ավել մակերես ունեցող տարածքի համար 20 000 (քսան հազար)-Հայաստանի Հանրապետության դրամ՝ առանց կոմունալ վճարների:
4. Հանդիսությունների սրահներում 150քմ և ավել մակերես ունեցող տարածքի համար մեկ օրը սահմանել 50000 Հայաստանի Հանրապետության դրամ, երկու օրը՝ 80000 (ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ ներառյալ կոմունալ վճարներ (էլեկտրաէներգիա, գազ, ջուր, գույք): Մինչև ժամը՝ 24<sup>00</sup> :
5. Սգո արարողությունների անցակացման նպատակով սրահի անվճար տրամադրման համար անհրաժեշտ է համայնքի ղեկավարի որոշումը:

Իսկականի հետ

ճիշտ է



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՈՍԿԱՆՅԱՆ  
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԲԵԹՆԻ ՊԵՏ՝ Ա. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ